

2016

ՏԱՐԵԿԱՆ
ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ



ԵՐԵՎԱՆԻ
ԶԱՎԱԶԱՊԵՏԱՐԱՆ

**Մենք
հաշվետու ենք**
մեր համաքաղաքացիներին

2016
ԵՐԵՎԱՆԻ
ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆ
ՏԱՐԵԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ





Հարգելի՛ համաքաղաքացիներ,

Երևանի քաղաքապետարանի տարեկան հաշվետվությունը տարվա ընթացքում կատարված և ընթացիկ աշխատանքների մասին համառոտ ամփոփագիր է, որը հերթական անգամ ներկայացնում ենք ձեզ՝ «**Մենք հաշվետու ենք մեր համաքաղաքացիներին**» խորագրի ներքո: Համոզված եմ՝ ներկայացված տեղեկատվության միջոցով հետաքրքիր կլինի ծանոթանալ մեր քաղաքում իրականացվող լայնածավալ ծրագրերին, որոնք անմիջական ազդեցություն ունեն բոլորիս առօրյայի, քաղաքային կյանքի որակի ու հաջորդ սերունդների Երևանի վրա:

Վերջին տարիներին Երևանի քաղաքապետարանի հետևողական և համակարգված աշխատանքի շնորհիվ նկատելի են մեր մայրաքաղաքի ձեռքբերումները: Երևանը տարեցտարի փոխվում է՝ դառնալով ավելի հարմարավետ ու մատչելի երևանացիների և ավելի գրավիչ մայրաքաղաքի հյուրերի համար: Յուրաքանչյուր տարի քաղաքային իշխանությունների աշխատանքների առանցքում են մայրաքաղաքի ենթակառուցվածքների շարունակական զարգացումը, մարդկանց կենսագործունեության ու հանգստի համար նպաստավոր պայմանների ստեղծումը, քաղաքային հարմարավետ միջավայրի ձևավորումը, որոնք էլ ապահովում են մայրաքաղաքի կայուն զարգացման երկարաժամկետ ծրագրերի իրագործումը:

2016 թվականին իրականացված ճանապարհաշինական ծրագրերը ծառայել են մայրաքաղաքի համար դեռևս արդիական համարվող երթևեկության ծանրաբեռնվածության

թեթևացմանը և անվտանգության ապահովմանը: Կառուցվել են նոր ճանապարհներ, բարեկարգվել են տասնյակ փողոցներ, արդիականացվել է լուսավորության ցանցը: Երևանում ավելացել է բարեկարգ բակերի թիվը, շարունակվել են բնակելի և հանգստյան գոտիների խնամքի ու մաքրության պահպանման աշխատանքները: Միանգամայն օրինաչափ է, որ մայրաքաղաքի փոփոխվող կենսաոլորտը նկատելիորեն ավելացրել է զբոսաշրջիկների հոսքը Երևան:

Շարունակվել են իրականացվել սոցիալական խոցելի խմբերի առաջնահերթ կարիքներին ծառայող սոցիալական և առողջապահական ծրագրերը: Դրանք ունեն բարոյական մեծ լիցք և մեր համաքաղաքացիների հանդեպ մշտական ուշադրության վկայությունն են: Վստահ եմ մայրաքաղաքի հանդեպ մեր ամենօրյա հոգատարությունն ու սերը մեր բոլոր ձեռքբերումների նախապայմանն է:

Սիրելի՛ երևանացիներ, համոզված եմ միասին դեռ բազմաթիվ ձեռքբերումներ ենք արձանագրելու, իսկ բնակիչների և քաղաքային իշխանությունների միջև օրեցօր ամրապնդվող կապի շնորհիվ Երևանը կդարձնենք բնակության համար աշխարհի լավագույն քաղաքներից մեկը՝ հարմարավետ, մատչելի, ապահով ու գրավիչ բոլորի և յուրաքանչյուր երևանցու համար:

Երևանի քաղաքապետ՝
ՏԱՐՈՆ ՄԱՐԳԱՐՅԱՆ

Մենք հաշվետու ենք մեր համաքաղաքացիներին

ԲՈՎԱՆԴԱ

ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅՈՒՆ

6

Ճանապարհաշինություն

Երևանի շրջանցիկ նոր ճանապարհը իրար կկապի մայրաքաղաքի հյուսիսային և հարավային մուտքերը, կանցնի վարչական 4 շրջանով և կբեռնաթափի քաղաքի կենտրոնը:

Համայնքի և մասնավոր հատվածի համագործակցությամբ քաղաքաշինական ներդրումային ծրագրեր

2016 թվականին Երևանի քաղաքապետարանը շարունակել է նպաստավոր պայմաններ ապահովել մասնավոր ներդրումների համար:

ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԲԱՐԵԿԱՐԳՈՒՄ

11

Բարեկարգ բակեր բոլորին

2016 թվականին մայրաքաղաքում բարեկարգ բակերի թիվն ավելացել է 340-ով:

Փողոցների և բակային տարածքների ասֆալտապատում

2016 թվականին իրականացվել են շուրջ 800 000 քմ ընթացիկ վերանորոգման աշխատանքներ:

Մայրերի սպիկապատում և եզրաքարերի նորոգում

2016թ. ընթացքում սպիկապատման աշխատանքներ են իրականացվել 67 հասցեներում, և նորոգման աշխատանքներ՝ 53 հասցեներում:

ՔԱՂԱՔԱՅԻՆ ՄԻՋԱԿԱՅՐ ԵՎ ԵՆԹԱԿԱՌՈՒՅՎԱԾՔՆԵՐ

15

Արտաքին լուսավորության ցանցի արդիականացում

2016 թվականին անցկացվել է 39.8 կմ լուսավորության նոր ցանց:

Քաղաքային կահավորում և ձևավորում

Նկարագարվել է 256 բակային տարածք, վերանորոգվել և գունազարդվել է 26 կամարանցում, վերանորոգվել և թարմացվել են նախկինում տեղադրված նստարանները և աղբամանները:

Հարմարավետ և մատչելի միջավայրի ստեղծում
Երևանում արդեն 25 ավտոբուս հարմարեցված է բնակչության սակավաշարժ խմբերի համար, և 2016թ. ընթացքում կառուցված թեքահարթակների թիվն ավելացել է 275-ով:

Հասարակական տրանսպորտ

2016թ. նախապատրաստական աշխատանքներ են իրականացվել մայրաքաղաքի հասարակական տրանսպորտի համակարգային բարեփոխումների ուղղությամբ, ինչպես նաև շարունակվել են Երևանի մետրոպոլիտենի վերակառուցման 2-րդ փուլի աշխատանքները:

ԿՈՄՈՒՆԱԼ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ

19

Բնակարանային ֆոնդի պահպանում

2016 թվականին համատիրությունների հետ համագործակցության շրջանակներում շարունակվել են Երևան քաղաքի բազմաբնակարան շենքերի ընթացիկ վերանորոգման աշխատանքները:

Ջրամատակարարում և ջրահեռացում

Վերականգնվել է «ԱԵրացիա» կեղտաջրերի մաքրման կայանը՝ ապահովելով առաջնային մեխանիկական մաքրումը և տիղմի մշակումը:

Կոշտ թափոնների կառավարում

24-ժամյա աշխատանքային ռեժիմով շարունակվել են աղբահանության և սանիտարական մաքրման աշխատանքները՝ միջազգային օպերատորի կողմից:

ԲՆԱՊԱՀՊԱՆՈՒԹՅՈՒՆ

23

Կանաչ տարածքների պահպանում և ընդլայնում

2016թ. մայրաքաղաքում կանաչ տարածքներն ընդհանուր առմամբ ավելացել են 6.8 հեկտարով:

Հանգստյան գոտիների վերականգնում

Նուբարաշեն վարչական շրջանը նոր այգի ունի. Այսպիսով, Երևանում վերջին տարիներին վերականգնված հանրային այգիների թիվը 16-ն է:

Երևանի կենդանաբանական այգու արդիականացում

Կենդանաբանական այգու վերակառուցման ծրագրի ամբողջական ավարտը նախատեսվում է 2017 թվականին:

ԿՐԹՈՒԹՅՈՒՆ

27

Նախադպրոցական կրթություն

2016թ. երևանաբնակ 30 295 երեխաների համար մայրաքաղաքի 160 մանկապարտեզներում ապահովվել է անվճար կրթություն:

Դպրոցական կրթություն

2016թ. Երևանի 159 դպրոցներում կազմակերպվել է 94 354 աշակերտների կրթությունը, այդ թվում՝ 2 077 աշակերտների ներառական կրթությունը:

ՄՇԱԿՈՒՅԹ ԵՎ ՍՊՈՐՏ

31

Մշակութային և սպորտային օջախներ

2016 թվականին Երևանում արտադպրոցական կրթություն է ստացել 27 537 երեխա

Գրադարաններ, թատրոններ և թանգարաններ

Մայրաքաղաքի 19 գրադարանների գրքային ֆոնդը հարստացվել է շուրջ 15 000 գրքով, ընթերցողների թիվը կազմել է 69 408 մարդ, իսկ թանգարաններն ունեցել են շուրջ 47 000 այցելու:

Երևանի քաղաքային միջոցառումները

Մայրաքաղաքում 2016 թվականի ընթացքում կազմակերպվել է մարզամշակութային ավելի քան 80 միջոցառում, այդ թվում՝ փառատոններ, բացօթյա համերգներ, ցուցահանդեսներ, մրցույթներ, մարաթոններ:

ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅՈՒՆ

35

Պոլիկլինիկաների վերանորոգում

2016 թվականին վերանորոգվել է 14 պոլիկլինիկա, իսկ մայրաքաղաքի պոլիկլինիկաների ջեռուցման խնդիրը լուծված է 100 %-ով:

Ամբուլատոր-պոլիկլինիկական

հաստատությունների վերազինում
2016 թվականին Երևանի քաղաքապետարանի ենթակայության պոլիկլինիկաներում գրանցվել է շուրջ 1 800 000 հաճախում:

Քաղաքացիների սպասարկում

Անվճար վիրահատվելու հնարավորություն է ստացել 6 382 քաղաքացի:

ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱՊԱՀՈՎՈՒԹՅՈՒՆ

39

Երեխաների համար

2016թ. ընթացքում 1-4-րդ դասարաններ հաճախող 5 697 երեխաների տրամադրվել են պայուսակներ և գրենական պիտույքներ, ինչպես նաև կազմակերպվել է 7-13 տարեկան 1 170 երեխաների ամառային հանգիստը մանկական առողջարարական ճամբարներում:

Ընտանիքների համար

Տարվա ընթացքում կարիքավոր 10 635 ընտանիք ստացել է պարենային աջակցություն, ինչպես նաև սիրիահայ ավելի քան 1 200 ընտանիքի տրամադրվել է դրամական, նյութական և պարենային աջակցություն:

Քնակարաններ՝ զինծառայողների ընտանիքներին

Նոր քնակարաններ են տրամադրվել զոհված և հաշմանդամ զինծառայողների և ազատամարտիկների 7 ընտանիքների, որոնցից 4-ը՝ ապրիլի սկզբին առաջնագծում զոհված զինծառայողների և կամավորների ընտանիքներ:

ԶԲՈՍԱԵՐՋՈՒԹՅՈՒՆ

43

Ջրոսաշրջությունը թվերով

2016 թվականի հունվար-սեպտեմբեր ամիսներին Հայաստանի Հանրապետություն է ժամանել 969 010 զբոսաշրջիկ, որոնք առնվազն մեկ օր անցկացրել են Երևանում:

Իրադարձային զբոսաշրջության զարգացում

Տարվա ընթացքում անցկացվել են ավանդական դարձած Զազի օր, «Համով-հոտով Երևան», «Երևան ՏԱՐԱԶՖեստ», «Ձմերուկի» և «Երևանի զարեջրի» փառատոնները:

ԱՐՏԱՔԻՆ ԿԱՊԵՐ

47

Երևանի համագործակցությունը տարբեր քաղաքների հետ

Լատվիայի մայրաքաղաք Ռիգայում բացվել է «Երևան» այգի-պուրակը, որի բացմանը ներկա է գտնվել Հայաստանի պատվիրակությունը:

Երևանի համագործակցությունը ԼՂՀ համայնքների հետ

Երևանի քաղաքապետարանի աջակցությամբ Ստեփանակերտում կառուցվում է «Ազատամարտիկների» պուրակը:

ԵՐԵՎԱՆԻ ԱՎԱԳԱՆԻ

49

Երևանի ավագանու նիստերը

2016 թվականին ավագանին ընդունել է 203 որոշում, որոնցից 6-ը անցել է հանրային քննարկման և հանրային բաց խումբների փուլ:

Երևանի պատվավոր քաղաքացիների կոչման շնորհում

2016 թվականին Երևանի ավագանու նիստում հաստատվել է Արթուր Ալեքսանյանին, Միհրան Հարությունյանին, Ռաֆայել Քոթանջյանին և Սառա Եսայանին Երևանի պատվավոր քաղաքացիների կոչում շնորհելու որոշումը:

ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅՈՒՆ



Ժամանակակից երկրների շարժիչ ուժը լայնածավալ քաղաքաշինական ծրագրերն են, որոնք ձևավորում են քաղաքային նոր միջավայր և նոր հարմարություններ՝ ապահովելով կյանքի նոր որակ քաղաքացիների համար, նպաստելով խնդիրների երկարաժամկետ լուծումներին, ինչպես նաև տասնյակ աշխատատեղեր ստեղծելով քաղաքում բնակվող մարդկանց համար:

2016 թ. մայրաքաղաքում իրականացվել են լայնածավալ քաղաքաշինական ծրագրեր, որոնցում մեծ տեղ են գրավում Երևանի ճանապարհային ցանցի ընդլայնման, կենտրոնի բեռնաթափման, ճանապարհային նոր հանգույցների նախագծման և կառուցման աշխատանքները, ինչպես նաև քաղաքային ենթակառուցվածքների արդիականացման և զարգացման ծրագրերը:



ՃԱՆԱՊԱՐՀԱՇԽՆՈՒԹՅՈՒՆ

ՇԻՐԱԿԻ ՓՈՂՈՑ-ԱՐՇԱԿՈՒՆՅԱՑ ՊՈՂՈՏԱ



**ԵՐԵՎԱՆԻ ՇՐՋԱՆՑԻԿ ՆՈՐ ՃԱՆԱՊԱՐՀԸ ԻՐԱՐ ԿԿԱՊԻ ՄԱՅՐԱՔԱՂԱՔԻ
ՀՅՈՒՍԻՍԱՅԻՆ ԵՎ ՀԱՐԱՎԱՅԻՆ ՄՈՒՏՔԵՐԸ, ԿԱՆՑՆԻ ՎԱՐՉԱԿԱՆ 4 ՇՐՋԱՆՈՎ ԵՎ
ԿԲԵՌՆԱԹԱՓԻ ՔԱՂԱՔԻ ԿԵՆՏՐՈՆԸ**

Այս տարի շահագործման հանձնվեց Արշակունյաց պողոտա-Շիրակի փողոց-Արտաշատի 5 կմ երկարությամբ և 24-28 մետր լայնությամբ ճանապարհը: Նորակառույց ճանապարհահատվածը Ասիական զարգացման բանկի աջակցությամբ 2014 թվականին մեկնարկած՝ Երևան քաղաքի շրջանցիկ ճանապարհի կառուցման համալիր ծրագրի մաս է կազմում: Ճանապարհահատվածը նախագծվել և կառուցվել է միջազգային չափորոշիչներին համապատասխան, ճանապարհի երթևեկելի հատվածից դուրս են բերվել կոմունալ ենթակառուցվածքները:

Ճանապարհի անընդհատ երթևեկությունն ապահովում է Արտաշատի խճուղու երկաթուղային գրծանցի վրայով կառուցված 270 մ երկարությամբ

ուղեանցը (էստակադա) և Շիրակի փողոց-Արշակունյաց պողոտա հատման մասի շրջանաձև երթևեկությամբ 2 ուղեանցերով ճանապարհը: Ճանապարհն ունի 4 երթևեկելի գոտի, լրացուցիչ երթևեկելի գոտի և սպասարկման ճանապարհ՝ հարակից տարածքի բնակիչների համար: Փոխարինվել են ճանապարհի բոլոր հաղորդողիները, տեղադրվել են էներգախնայող LED լուսատուներ, հարակից տարածքները բարեկարգվել և կանաչապատվել են:

Ճանապարհահատվածում կառուցված վերգետնյա հետիոտնային անցումը վերելակով համալրված առաջին անցումն է Երևանում: Այն բնակչության բոլոր խմբերին թույլ է տալու ազատ և անվտանգ տեղաշարժվել:



Բնակչության բոլոր խմբերը կարող են ազատ և անվտանգ տեղաշարժվել



Տեղադրվել են էներգախնայող LED լուսատուներ





ԵՐԵՎԱՆՈՒՄ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԶԱՓՈՐՈՇԻՉՆԵՐԻՆ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՂ 23 ԿՄ ԵՐԿԱՐՈՒԹՅԱՄԲ ՇՐՋԱՆՑԻԿ ՃԱՆԱՊԱՐԶԻ ԿԱՌՈՒՑՈՒՄԸ ԿԱՎԱՐՏՎԻ 2019 ԹՎԱԿԱՆԻՆ: ՃԱՆԱՊԱՐԶԻ ԿԱՌՈՒՑՈՒՄՆ ԷԱԿԱՆՈՐԵՆ ԿԼՈՒՑԻ ՄԱՅՐԱՔԱՂԱՔԻ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ՓՈՂՈՑՆԵՐԻ ԲԵՌՆԱԹԱՓՄԱՆ ԿԱՐԵՎՈՐԱԳՈՒՅՆ ԽՆԴԻՐԸ:



2016 թվականին սկսվել են շրջանցիկ ճանապարհի՝ Շիրակի փողոցից դեպի Արզավանդի հատված տանող ճանապարհի շինարարական աշխատանքները: Հրազդան գետի վրա նախատեսված է կառուցել 252 մ երկարությամբ կամուրջ, որը կըկրի «Էրեբունի-Երևան 2800» անունը և կնվիրվի Երևանի 2800-ամյակին:

Ամբողջությամբ ավարտվել են շրջանցիկ ճանապարհի՝ Կարմիր բլուր հնավայրի հարակից տարածքում իրականացվող հնէաբանական պեղումները: Հնագիտական գտածոները տեղափոխվել են վերականգնման լաբորատորիա՝ հետազայում ցուցադրության ներկայացնելու նպատակով: Հայտնաբերված գտածոները թվագրվում են ուրարտական և նախաուրարտական ժամանակաշրջանով:

Կայացել է Դավթաշեն-Աշտարակի խճուղի ճանապարհահատվածի շինարարական աշխատանքների մրցույթը, և 2017 թվականի սկզբին կտրվի այդ հատվածի շինարարական աշխատանքների մեկնարկը:

Մրցութային փուլում է Բաբաջանյան փողոց-Աշտարակի խճուղի ճանապարհահատվածի շինարարական աշխատանքների փաթեթը:



2016 թվականին Դավթաշեն 2-րդ թաղամասի վերին հատվածից Եղվարդի խճուղի և Տիգրան Պետրոսյան փողոց տանող հատվածում կառուցվել է ժամանակակից չափորոշիչներին համապատասխան ևս մեկ ճանապարհային հանգույց:



ՀԱՄԱՅՆՔԻ ԵՎ ՄԱՍՆԱԿՈՐ ՀԱՏՎԱԾԻ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՄԲ ՔԱՂԱՔԱՇԻՆԱԿԱՆ ՆԵՐԴՐՈՒՄԱՅԻՆ ԾՐԱԳՐԵՐ

2016 թվականին Երևանի քաղաքապետարանը շարունակել է նպաստավոր պայմաններ ապահովել մասնավոր ներդրումների համար: Երևանում շահագործման է հանձնվել 3 առևտրային կենտրոն՝

«Ռոսիա-Մոլ»



«Տաշիր Սթրիթ»



«Երևան Տոնավաճառ»



Շահագործման է հանձնվել «Մուլտի Ուելնես կենտրոն» բազմաֆունկցիոնալ սպորտային համալիրը



Մայրաքաղաքում ավելացել է տուրիստական նշանակության ևս մեկ օբյեկտ՝ հյուրանոցային համալիր՝ «Ռեդիսոն բլյու հոթել Երևան»-ը



Մայրաքաղաքում «Մարչեյի բնակարաններ երիտասարդ մասնագետներին» բնակարանային ապահովության սոցիալական ծրագրի շրջանակներում կառուցվել է բազմաբնակարանային համալիր:



Ընթացքի մեջ են միջազգային չափորոշիչներին համապատասխանող կրկեսի նոր շենքի, «Կամար» բիզ- նես կենտրոնի, Ծարավ աղբյուրի փողոցում կառուցվող ուսումնամարզական համալիրի ու նոր զբոսայ- գու, «Երազ» բնակելի թաղամասի 8 նոր մասնաշենքերի, «ԻԲԻՍ» (IBIS), «Շերաթոն» (Sheraton), հյուրա- նոցային համալիրների շինարարական աշխատանքները:




ՄԿՍՎԵԼ ԵՆ «ՀՐԱՆՏ ՄԱԹԵՎՈՍՅԱՆ»
ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆ-ԹԱՆԳԱՐԱՆԻ
ՇԻՆԱՐԱՐԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ, ՈՐՈՆՔ
ԿԱՎԱՐՏՎԵՆ 2017 ԹՎԱԿԱՆԻՆ:



ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏՈՒՄ

2013-2016ԹԹ. ԻՐԱԿԱՆԱՑՎԱԾ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ



ՆՈՐ ԲՆԱԿԱՐԱՆ Է
ՍՏԱՑԵԼ 4-ՐԴ ԿԱՐԳԻ
ՎԹԱՐԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՈՒՆԵՑՈՂ
ՇԵՆՔԵՐԻ **650** ԸՆՏԱՆԻՔ



2012-2016ԹԹ. ԵՐԵՎԱՆՈՒՄ
ԿԱՌՈՒՑՎԵԼ Է **15** ՎԵՐԳԵՏՆՅԱ
ԵՎ ՀԻՄՆԱՆՈՐՈԳՎԵԼ՝ **4**
ՍՏՈՐԳԵՏՆՅԱ ԱՆՑՈՒՄ



ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԲԱՐԵԿԱՐԳՈՒՄ



Յուրաքանչյուր քաղաքում հարմարավետ կենսակերպը պայմանավորվում է բարեկարգ և լուսավոր բակերով ու ճանապարհներով, նորոգված շենքերով և հարմարավետ քաղաքային միջավայրով: Այդ նպատակով 2016թ. ընթացքում շարունակվել են իրականացվել շինարարության և բարեկարգման լայնածավալ ծրագրեր: Կարևոր է նշել, որ բոլոր նախագծերի հենքում քաղաքացիներ Տարոն Մարգարյանի՝ սահմանած Երևան քաղաքի համաչափ զարգացման սկզբունքներն են:



ԲԱՐԵԿԱՐԳ ԲԱԿԵՐ ԲՈԼՈՐԻՆ



2016 թվականին մայրաքաղաքում բարեկարգ բակերի թիվն ավելացել է 340-ով

2016 թվականին մայրաքաղաքում կառուցվել, բարեկարգվել, կահավորվել և նկարազարդվել է **340** բակային տարածք:

Կառուցվել է մինի ֆուտբոլի արհեստական խոտածածկով **9** դաշտ, ընթացիկ վերանորոգման աշ-

խատանքներ են կատարվել նախորդ տարիներին կառուցված մինի ֆուտբոլի դաշտերում:

Բարեկարգված բակային տարածքներում տեղադրվել են **107** մանկական խաղեր և **315** մարզասարքեր:



ՓՈՂՈՑՆԵՐԻ ԵՎ ԲԱԿԱՅԻՆ ՏԱՐԱԾՔՆԵՐԻ ԱՍՖԱԼՏԱՊԱՏՈՒՄ



Երևան քաղաքի փողոցների և բակային տարածքների ասֆալտրետտոնե ծածկի պահպանման և բարելավման նպատակով 2016 թվականին իրականացվել են շուրջ 800 000 քմ ընթացիկ վերանորոգման աշխատանքներ:

Աշխատանքների գերակշիռ մասն իրականացվել է բակային տարածքներում: Միաժամանակ իրականացվել են շուրջ 10 000 քմ հողային պաս-

տառով ճանապարհների հիմնանորոգման և ասֆալտապատման աշխատանքներ:


2017 թվականի ծրագրով նախատեսված ասֆալտապատման աշխատանքները կիրականացվեն նույն սկզբունքներով, ինչը թույլ կտա ավարտին հասցնել բազմաբնակարան շենքերի բակային տարածքների ասֆալտապատման ծրագիրը:

ՄԱՅԹԵՐԻ ՍԱԼԻԿԱՊԱՏՈՒՄ ԵՎ ԵԶՐԱՔԱՐԵՐԻ ՆՈՐՈԳՈՒՄ

2016 թվականի ընթացքում սալիկապատվել է 3 825 քմ մայթ՝ 67 հասցեներում և նորոգվել 1 316 գծմ եզրաքար՝ 53 հասցեներում:



2013-2016 ԹԹ. ԵՐԵՎԱՆՈՒՄ ԲԱՐԵԿԱՐԳՎԵԼ Է 1 600 ԲԱԿ



ՔԱՂԱՔԱՅԻՆ ՄԻՋԱԿԱՅՐ ԵՎ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐ



Քաղաքային միջավայրն ուղղակի ներգործություն է ունենում մարդկանց կյանքի վրա: Որքան հարմարեցված ու մարչելի կլինի փողոցը, արդյոք հարմարավետ ու հասանելի կլինեն հանրային օգտագործման վայրերն ու տրանսպորտային միջոցները, լուսավորված կլինեն արդյոք փողոցները հեղուկության ու վարորդների համար. այս հարցերով է սկսում մարդկանց օրը քաղաքում և ավարտվում դրական կամ բացասական փորձառությամբ օրվա ընթացքում: Այս համատեքստում մարչելի ու հարմարավետ Երևանի կառուցումը քաղաքապետարանի առաջնահերթություններից է, և վերջին տարիների հետևողական աշխատանքի շնորհիվ արդեն նկատելի են զգալի արդյունքներ: Երևանն այլևս հարմարավետ ու գրավիչ քաղաք է սկսում դառնալ՝ համապատասխան քաղաքային կահավորանքով և միջավայրով:

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՍԱՎՈՐՈՒԹՅԱՆ ՑԱՆՑԻ ԱՐԴԻԱԿԱՆԱՑՈՒՄ



Մայրաքաղաքի արտաքին լուսավորության ցանցի պահպանման և շահագործման աշխատանքներին զուգահեռ՝ 2016 թվականին պատրաստվել են Երևան քաղաքի թվով 28 փողոցների արտաքին լուսավորության ցանցի արդիականացման ծրագրի մրցութային փաստաթղթերը: Ծրագրի շրջանակներում նախատեսվում է լուսատուները փոխարինել էներգախնայող և ժամանակակից լուսատուներով՝ ապահովելով վերգետնյա բոլոր մալուխների անցկացումը ստորգետնյա եղանակով, ինչպես նաև ներդնել լուսատուների հեռակառավարման նոր համակարգ, որը հնարավորություն կտա լուսավորության հզորությունը կառավարել տար-

բեր ժամերին և ապահովել շուրջ **60% խնայողություն:**

Միաժամանակ 2016 թվականին համայնքային միջոցներով լուսավորվել է 149 չլուսավորված փողոց-բակային հատված, այգի, ստորգետնյա անցում, ինչպես նաև ՄԱԿ-ի հետ համագործակցության շրջանակներում Մաշտոց պողոտայի բոլոր լուսատուները փոխարինվել են էներգախնայող LED լուսատուներով:

2016 թվականին անցկացվել է 39.8 կմ լուսավորության նոր ցանց:

ՔԱՂԱՔԱՅԻՆ ԿԱՆԱՎՈՐՈՒՄ ԵՎ ՁԵՎԱՎՈՐՈՒՄ

2016 թվականի ընթացքում Երևանում շարունակվել է քաղաքային կահավորանքի և ձևավորման ծրագիրը՝ ապահովելով մայրաքաղաքի գրավչությունն ու հարմարավետությունը՝ բնակիչների և հյուրերի համար:

- ▶ Վերանորոգվել և գունազարդվել է 26 կամարանցում:
- ▶ Վերանորոգվել և թարմացվել են նախկինում տեղադրված նստարանները և աղբամանները, տեղադրվել են նորերը:
- ▶ Նկարազարդվել է 256 բակային տարածք:
- ▶ Տեղադրվել են փողոցների նորաճ 15 ուղենիշներ և ծառաբների չուգունե 30 ծածկույթներ:
- ▶ Տեղադրվել է անվճար հայտարարությունների 100 վահանակ:



Մայրաքաղաքի արտաքին տեսքը բարելավելու նըպատակով մշակվել են պատմամշակութային արժեք ունեցող 60 շենքերի գովազդային անձնագրեր, որոնց համաձայն գովազդային վահանակ-



ների փոխարինումը կսկսվի 2017 թվականից:

2016 թվականին ապամոնտաժվել է ապօրինի տեղադրված կամ օրենսդրությանը չհամապատասխանող շուրջ 600 գովազդային վահանակ:



ՀԱՐՄԱՐԱՎԵՏ ԵՎ ՄԱՏՉԵԼԻ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՍՏԵՂԾՈՒՄ

2016 թվականին շարունակվել են մայրաքաղաքում մատչելիության և հարմարավետության ապահովմանն ուղղված ծրագրերը, որոնք հատկապես կարևոր են՝ փողաշարժման խնդիրներ ունեցող բնակիչների հարմարավետությունը քաղաքում ապահովելու համար:

- ▶ Երևանում կառուցված նոր այգին հավելել է մատչելի հանրային տարածքների թիվը: Նուբարաշենի Կենտրոնական բարեկարգված այգու տարածքը համալրվել է 7 թեքահարթակներով և այն դարձել է հարմար բոլոր քաղաքացիների ազատ տեղաշարժի և հանգստի համար:
- ▶ Երևանում 2016 թվականին շահագործման է հանձնվել առաջին վերգետնյա անցումը՝ հարմարեցված բնակչության բոլոր խմբերի համար:
- ▶ 2016 թվականին համայնքային բյուջեի միջոցներով կառուցվել է ևս 275 թեքահարթակ:
- ▶ Երևանի 73 հատվածներում տեղադրվել են մայթերի ավարտի մասին զգուշացնող հատուկ գոգավորությամբ դեղին սալահատակներ՝ տեսողության խնդիրներ ունեցող քաղաքացիների համար: Աշխատանքները սկսվել են Ն. Տիգրանյանի անվան

թիվ 14 հատուկ դպրոցի ուսումնափորձարարական բակում, Կոյրերի մշակույթի տան մուտքի հատվածում:

- ▶ 2016 թվականին քաղաքապետարանի ենթակայության 5 ավտոբուս ևս հարմարացվել են առանձնահատուկ կարիքներ ունեցող քաղաքացիների համար: Այսպիսով, դրանց թիվը մայրաքաղաքում հասցվել է 25-ի:
- ▶ Քաղաքային 36 ավտոբուսներում տեղադրվել են կանգառների ազդարարման ավտոմատ համակարգեր:
- ▶ Մայրաքաղաքի բնակիչների և քաղաքի հյուրերի համար հասարակական տրանսպորտն առավել հարմարավետ դարձնելու նպատակով քաղաքային 36 ավտոբուսներում ներդրվել են կանգառների ազդարարման ավտոմատ համակարգեր, և կանգառները հայտարարվում են հայերեն և անգլերեն լեզուներով: Այս կերպ քաղաքային տրանսպորտը մատչելի է դարձել նաև առանձնահատուկ կարիքներ ունեցող քաղաքացիների համար:
- ▶ Երևանի 21 խաչմերուկներ կահավորվել են ձայնաազանշանային լուսացույցներով:



ՀԱՄԱՐԱԿԱԿԱՆ ՏՐԱՆՍՊՈՐՏ

2016թ. նախապատրաստական աշխատանքներ են իրականացվել մայրաքաղաքի հասարակական տրանսպորտի համակարգային բարեփոխումների ուղղությամբ:

Գործող երթուղային ցանցի և առկա տրանսպորտային պարկի շրջանակներում քաղաքապետարանն ամենօրյա աշխատանքներ է իրականացրել հասարակական տրանսպորտի անխափան և անվտանգ աշխատանքն ապահովելու ուղղությամբ:

Միաժամանակ ոլորտի համակարգային բարեփոխումների իրականացման նպատակով Ասիական զարգացման բանկի աջակցությամբ ներգրավվել է միջազգային փորձառու խորհրդարան, որը պետք է.


- ▶ մշակի Երևան քաղաքի տրանսպորտի նոր երթուղային ցանց՝ հնարավորինս ապահովելով կրկնությունների բացառում և արդյունավետություն,
- ▶ հաշվարկի մշակված երթուղային ցանցին համապատասխան անհրաժեշտ տրանսպորտային միջոցների տեսակներն ու քանակները,
- ▶ մշակի միասնական և էլեկտրոնային տոմսային համակարգի ներդրման հնարավորությունները Երևան քաղաքում:

ՎԵՐԳԵՏՆՅԱ ԷԼԵԿՏՐԱՏՐԱՆՍՊՈՐՏ ԵՎ ՄԵՏՐՈՊՈԼԻՏԵՆ

Մշակվել է Երևանի վերգետնյա էլեկտրատրանսպորտի ամբողջական արդիականացման ծրագրի իրագործելիության ուսումնասիրությունը, ինչի գործնական իրագործումը դիտարկվում է տրանսպորտային համակարգի բարեփոխումների համատեքստում:

2016 թվականին շարունակվել են Երևանի մետրոպոլիտենի վերակառուցման 2-րդ փուլի աշխատանքները, որի շրջանակներում դրենաժային թունելի երկարացման ծրագիրը կավարտվի 2017 թվականին:

2013-2016 ԹԹ. ԵՐԵՎԱՆՈՒՄ ՀԱՐՄԱՐԱՎԵՏ ԵՎ ՄԱՏՁԵԼԻ ՄԻՋԱԿԱՅՐԻ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՀԱՄԱՐ ԻՐԱԿԱՆԱՑՎԱԾ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ



ԿՈՄՈՒՆԱԼ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ





Կոմունալ տնտեսությունը քաղաքային կառավարման տեսանկյունից բավականին հեղաքրքիր և բարդ ոլորտ է: Բարդությունը հատկապես նկատելի է դառնում այն ժամանակ, երբ ծագում են խնդիրներ կամ երբ ոլորտի սպասարկումը թերի է: Կարևոր է արձանագրել, որ վերջին տարիներին Երևան քաղաքի զարգացման հետևողական աշխատանքների համատեքստում մայրաքաղաքում շարունակվում են կոմունալ տնտեսության բարեփոխումները՝ Երևանի բնակիչների կյանքի պայմաններն առավել հարմարավետ դարձնելու համար: Այդ առումով 2016թ. լի էր ձեռքբերումներով:

ԲՆԱԿԱՐԱՆԱՅԻՆ ՖՈՆԴԻ ՊԱՇՏՊԱՆՈՒՄ


2016 թվականին համատիրությունների հետ համագործակցության շրջանակներում շարունակվել են Երևան քաղաքի բազմաբնակարան շենքերի ընթացիկ վերանորոգման աշխատանքները:

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԱՌՄԱՄԲ ՄԱՅՐԱՔԱՂԱՔՈՒՄ ՀԻՄՆԱՆՈՐՈԳՎԵԼ ԵՎ ՎԵՐԱՆՈՐՈԳՎԵԼ Է 1 897 ՇԵՆՔԵՐԻ ՇՈՒՐՋ 138 000 ՔՄ ՏԱՆԻՔ

- ▶ Վերանորոգվել է **774 շենքերի** շուրջ 77 000 քմ մակերեսով հարթ տանիք:
- ▶ Մասնակի նորոգվել է **1 111 շենքերի** շուրջ 49 000 քմ մակերեսով թեք տանիք:
- ▶ Ամբողջովին հիմնանորոգվել է **12 շենքի** 11 094 քմ թեք տանիք:
- ▶ Վերանորոգվել է բազմաբնակարան **541 շենքերի** 924 շքամուտք:
- ▶ Բազմաբնակարան շենքերի վթարային պատշգամբների փլուզումները կանխելու նպատակով նորոգվել և ամրացվել է **57 շենքի** 138 վթարային պատշգամբ:
- ▶ Վերանորոգվել է շենքերի ջրամատակարարման և ջրահեռացման 17 082 գծմ ներքին ցանց:



ԲԱԶՄԱԲՆԱԿԱՐԱՆ ՇԵՆՔԵՐՈՒՄ
ԻՐԱԿԱՆԱՑՎԱԾ
ԾՐԱԳՐԵՐ 2013-2016ԹԹ.



ՋՐԱՄԱՏԱԿԱՐԱՐՈՒՄ ԵՎ ՋՐԱՇԵՌԱՑՈՒՄ


2016 թվականին շարունակվել են ջրամատակարարման և ջրահեռացման ուղղությամբ իրականացվող աշխատանքները:

- Ֆրանսիայի կառավարության կողմից տրամադրված վարկային ծրագրի շրջանակներում ամբողջությամբ արդիականացվել է 23 փողոցների 5,2 կմ կոյուղու ցանցը, կառուցվել է 94 կմ նոր ջրագիծ, իրականացվել են 6 344 անհատական ջրաչափական հանգույցների կառուցման աշխատանքներ:
- Վերակառուցվել է «Աէրացիա» կեղտաջրերի մաքրման կայանը՝ ապահովելով առաջնային մեխանիկական մաքրումը և տիղմի մշակումը:
- Ներդրվել է ջրամատակարարման ամբողջ ցանցի հեռակառավարման ՍԿԱԴԱ համակարգ, որի արդյունքում բարելավվելու է խմելու ջրի հոսքերի կառավարման և մատակարարման արդյունավետությունը և անվտանգությունը:


- Մեկնարկել է ՎԶԵԲ-ի, ԵՆԲ-ի և Եվրոպական Միության աջակցությամբ իրականացվող ջրամատակարարման բարելավման ծրագիրը, որի շրջանակներում կառուցվել և շահագործման է հանձնվել 30 բակային նոր պոմպակայան՝ համապատասխան տարածքներում ապահովելով շուրջօրյա ջրամատակարարում:

- Մեկնարկել են 152 կմ ջրամատակարարման ցանցի կառուցման և 13 000 անհատական ջրաչափական հանգույցների և դիտահորերի կառուցման աշխատանքները:

Բոլոր ծրագրերն ուղղված են մայրաքաղաքում հատկապես մասնավոր տնատիրությունների և բազմաբնակարան շենքերի ջրամատակարարումը հուսալի և անվտանգ դարձնելուն:



ՋՐԱՄԱՏԱԿԱՐԱՐՈՒՄԸ ԵՐԵՎԱՆՈՒՄ




ԿՈՇՏ ԹԱՓՈՆՆԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ

Երևանում տարիներ շարունակ հիմնախնդիր համարվող աղբահանության և սանիտարական մաքրման ոլորտը 2016թ. ընթացքում կարգավորման իր վերջնակետին հասավ՝ միջազգային օպերատորի՝ «Սանիթեք» ընկերության՝ բոլոր վարչական շրջաններում սպասարկման իրականացմամբ: Միջազգային որակի աղբահանությունը, ամբողջապես նորացված տեխնիկա-սարքավորումները, ինչպես նաև Երևանի ողջ տարածքում տեղադրված եվրոպական արտադրության աղբամանները բոլորովին նոր տեսք հաղորդեցին քաղաքին և հարմարավետություն ապահովեցին: 2016թ. նշանակալի է նաև ծնամաքման տեխնիկայի թվաքանակի աճով:

Կարևոր է հատկապես նշել, որ 2016 թվականին գործնական փուլ է մտել կոշտ թափոնների կառավարման ծրագրի կարևորագույն բաղադրիչ հանդիսացող նոր աղբավայրի կառուցման ծրագիրը: Պատրաստվել է նոր աղբավայրի կառուցման և հին աղբավայրերի անվտանգ սանիտարական մեկուսացման մրցութային փաթեթները, իսկ աշխատանքները կմեկնարկեն 2017 թվականին: Հին աղբավայրերի անվտանգ սանիտարական մեկուսացման ծրագրի շրջանակներում տեղադրվելու է գոյացող գազերի հավաքման համակարգ և կառուցվելու է էլեկտրակայան:

ԱՂԲԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՍԱՆԻՏԱՐԱԿԱՆ ՄԱՔՐՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ ԵՐԵՎԱՆՈՒՄ



ԲՆԱՊԱՀՊԱՆՈՒԹՅՈՒՆ

Բնապահպանության ոլորտը Երևանի քաղաքապետարանի առաջնահերթություններից մեկն է, և ոլորտի ծրագրերը կյանքի են կոչվում բազմաթիվ միջոցառումներով և գործիքակազմով: Տարեկան առնվազն երկու անգամ կազմակերպվող համաքաղաքային ծառատունկեր, ծառերի և կանաչ տարածքների խնամքի հատուկ մոտեցումներ, ոռոգման ցանցի ընդլայնում, կանաչ տարածքների ավելացում և խնամք. սրանք այն բազմաթիվ ծրագրերից մի քանիսն են միայն, որոնք իրականացվում են Երևանի կանաչ զարկերակի կենսագործունեությունն ապահովելու համար: 2016թ. ևս Երևան քաղաքում շարունակվել են հանգստյան գոտիների, կանաչ տարածքների պահպանման և վերականգնման աշխատանքները:

ԿԱՆԱԶ ՏԱՐԱԾՔՆԵՐԻ ՊԱՀՊԱՆՈՒՄ ԵՎ ԸՆԴԱՅՆՈՒՄ

2016թ. մայրաքաղաքում կանաչ տարածքներն ընդհանուր առմամբ ավելացել են 6.8 հեկտարով:

ԿԱՏԱՐՎԱԾ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ ԹՎԵՐՈՎ

- ▶ Տնկվել է 45 000 ծառ և թուփ:
- ▶ Բարելավվել է 10,5 հա սիզամարգ:
- ▶ Ծաղկային տարածքները համալրվել են 2 730 000 ծաղկասածիլներով՝ կազմելով 7,3 հա:
- ▶ Ծաղկային գեղարվեստական կոմպոզիցիաների թիվն ավելացել է 115-ով:
- ▶ Կրապատվել է ևս 75 000 ծառ:
- ▶ Կատարվել են 35 000 ծառերի բուժման աշխատանքներ:
- ▶ Կառուցվել է 2 խորքային հոր, որոնք թույլ են տալիս ոռոգել 20-25 հա կանաչ տարածք:

ՄԱՅՐԱՔԱՂԱՔՈՒՄ ՈՌՈԳՎՈՂ ՏԱՐԱԾՔՆԵՐԻ ՄԱԿԵՐԵՍՆ ԱՎԵԼԱՅԵԼ Է ՇՈՒՐՋ 6 %-ՈՎ



ՀԱՆԳՍՏՅԱՆ ԳՈՏԻՆԵՐԻ ՎԵՐԱԿԱՆԳՆՈՒՄ

Նուբարաշեն վարչական շրջանն ունի նոր այգի: Երևան քաղաքի համաչափ զարգացման սկզբունքով Նուբարաշեն վարչական շրջանում մայրաքաղաքի բյուջեի միջոցներով վերակառուցվել և բարելավվել է Նուբարաշենի Կենտրոնական զբոսայգին: Այգու ընդհանուր մակերեսը կազմում է 2 հա: Այն հարմարեցված է բնակչության սակա-


վաշարժ խմբերի համար, ունի խաղահրապարակ՝ մանկական խաղերով և մարզասարքերով, զրուցատաղավարներ, 22 քմ մակերեսով ջրավազան՝ 75 մեծ և փոքր շատրվաններով, ստորջրյա լուսատուներով, արտաքին լուսավորության էներգախնայող ցանց, սանհանգույց:




Շարունակվում է համայնք-մասնավոր համագործակցության շրջանակներում Գլխավոր պողոտայի Մաշտոց պողոտա-Սարյան փողոց հատվածի զբոսայգու վերակառուցման ծրագիրը:



2013-2016թթ. ԵՐԵՎԱՆՈՒՄ ԿԱՆԱԶ ՏԱՐԱԾՔՆԵՐԻ ԱՎԵԼԱՑՈՒՄԸ



2012-2016թթ. ԵՐԵՎԱՆՈՒՄ ՎԵՐԱԿԱՌՈՒՑՎԵԼ Է 16 ՀԱՆԳՍՏԻ ԳՈՏԻ



ԵՐԵՎԱՆԻ ԿԵՆՂԱՆԱԲԱՆԱԿԱՆ ԱՅԳՈՒ ԱՐԴԻԱԿԱՆԱՑՈՒՄ

Քաղաքապետարանի շարունակական ջանքերի շնորհիվ Երևանի կենդանաբանական այգին դառնալու է բնապահպանական, կրթամշակութային, ժամանցային և զբոսաշրջային տարածաշրջանային նշանակության վայր՝ ժամանակակից չափորոշիչներին համապատասխան:

Կենդանաբանական այգու վերակառուցման

ծրագրի ամբողջական ավարտը նախատեսվում է 2017 թվականին: Աշխատանքների արդյունքում կթարմացվեն ազատավանդակները, կավելանան քայլուղիները, ընդհանուր օգտագործման ճանապարհները, հանգստի համար նախատեսված կանաչ տարածքները:



2016 թվականին մեկնարկել են նոր ազատավանդակների և նոր կարանտինի կառուցման աշխատանքները:


ԿԱՌՈՒՑՎՈՒՄ ԵՆ ՆՈՐ ԱԶԱՏԱՎԱՆԴԱԿՆԵՐ.

- ▶ գայլերի և արջերի համար՝ տարածքի ներկայիս 1 250 քմ մակերեսը նախատեսված է հասցնել 5 550 քմ-ի,
- ▶ առյուծների համար՝ 2 950 քմ ընդհանուր մակերեսով, որից 385 քմ՝ որպես կենդանիների ձմեռային կացարան,
- ▶ թռչունների համար՝ 5 000 քմ մակերեսով, ազատավանդակը հնարավորություն է ընձեռելու այցելուներին հայտնվել թռչունների հետ նույն տարածքում:

Կառուցվում է նաև կենդանիների կարանտինի համար նախատեսված 632 քմ ընդհանուր մակերեսով 5 շինությունների համալիր՝ երկուական 100 քմ և երեքական 144 քմ մակերեսով, որը հնարավորություն կտա նոր բերված կենդանիներին որոշակի ժամանակաշրջանում ադապտացնել բնակլիմայական միջավայրին և այնուհետև միայն տանել

կենդանաբանական միջավայր: Ներկայումս կառուցվում է երկու ճանապարհ-արահետ՝ յուրօրինակ լուծումներով նոր դիտահարթակներ և անցուղիներ: Կատարված բոլոր աշխատանքները նպաստել են Երևանի կենդանաբանական այգու այցելուների թվի ավելացմանը:

ԿԵՆՂԱՆԱԲԱՆԱԿԱՆ ԱՅԳՈՒ ԱՅՑԵԼՈՒՆԵՐԻ ԹԻՎԸ՝



ԿՐԹՈՒԹՅՈՒՆ



Երևանի քաղաքապետարանի՝ կրթության ոլորտում հրականացված ծրագրերի հիմքում 2016թ. ևս ընկած են եղել մայրաքաղաքի նախադպրոցական տարիքի երեխաների անվճար կրթության ապահովման խնդիրները, ինչպես նաև Երևանի քաղաքապետարանի ենթակայությամբ գործող կրթական կազմակերպություններում ուսուցման համար անհրաժեշտ պայմանների բարելավումը: Նորոգված դասասենյակներ, թարմացված գույքով խմբասենյակներ, ջեռուցման համակարգեր և ոլորտի շարունակական բարելավումներ. սրանք 2016թ. աշխատանքների բնորոշ հատկանիշներն են:

ՆԱԽԱԴՊՐՈՑԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅՈՒՆ

2016թ. երևանաբնակ **30 295** երեխաների համար մայրաքաղաքի 160 մանկապարտեզներում ապահովվել է անվճար կրթություն, այդ թվում՝ 168 երեխայի ներառական կրթությունը 8 կենտրոններում և սոցիալապես անապահով ընտանիքների շուրջ 80 երեխայի կրթություն՝ գիշերակացով:

Փոքրիկ երևանցիների նախադպրոցական կրթության համար ավելի հարմարավետ պայմաններ ստեղծելու նպատակով 2016 թվականին շարունակվել են մանկապարտեզների հիմնանորոգ-

ման, նորոգման և գույքի թարմացման աշխատանքները: Հիմնանորոգվել է 4 և նորոգվել 52 նախադպրոցական կրթական հաստատություն, տրամադրվել է 8 744 նոր գույք:

Ուսումնական տարվա ընթացքում մանկապարտեզներում կազմակերպվել է 3 799 միջոցառում: Իրենց հերթին սպասող փոքրիկների թիվը նվազեցնելու նպատակով հնարավորության շրջանակներում բացվել են լրացուցիչ խմբեր:



ԵՐԵՎԱՆՈՒՄ 2013-2016 ԹԹ.



ԴՊՐՈՑԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅՈՒՆ



Պետության կողմից Երևանի քաղաքապետին պատվիրակված լիազորությունների շրջանակում Երեվանի 159 դպրոցներում կազմակերպվել է 94 354 աշակերտների կրթությունը, այդ թվում՝ 2 077 աշակերտների ներառական կրթությունը: Դպրոցներում սովորող սոցիալապես անապահով 4 768 աշակերտ ապահովվել է անվճար դասագրքերով:


Երևանի քաղաքապետարանի ենթակայությամբ գործող 3 հատուկ դպրոցներում ապահովվել է շուրջ 310 երեխաների կրթությունն ու գիշերակացը: Երևանի քաղաքապետարանի ենթակայության 4 դպրոցներում ձևավորված նախակրթարաններում կազմակերպվում է 78 երեխայի կրթությունը:




Երևանի բյուջեի միջոցներով ամբողջությամբ հիմնանորոգվել է Յոհաննես Լեփսիուսի անվան թիվ 88 դպրոցը:



**ԵՐԵՎԱՆԻ ԴՊՐՈՑՆԵՐՈՒՄ ՍՈՎՈՐՈՂ
ԱՇԱԿԵՐՏՆԵՐԻ ԹԻՎԸ**



ՄԱՐԶԱՅԻՆ ԱՌԱՐԿԱՅԱԿԱՆ ՕԼԻՄՊԻԱԴԱՆԵՐՈՒՄ ՀԱՂԹՈՂ ԱՇԱԿԵՐՏՆԵՐԻ ԹԻՎԸ՝ **315**
ՄԱՐԶԱԿԱՆ ԽԱՂԵՐՈՒՄ ՀԱՂԹՈՂ ԱՇԱԿԵՐՏՆԵՐԻ ԹԻՎԸ՝ **152**



ՄՇԱԿՈՒՅԹ ԵՎ ՍՊՈՐՏ



2016թ. Երևանի քաղաքային առօրյան լի էր մշակութային և մարզական իրադարձություններով, որոնք նախատեսված էին տարբեր նախասիրությունների և հետաքրքրությունների խմբերի մարդկանց համար: Քաղաքապետարանը, այսպիսով, շարունակում է հետևողականորեն աշխատանքներ տանել մայրաքաղաքի մշակութային և մարզական կյանքը ավելի բազմազան դարձնելու ուղղությամբ: Քաղաքային իշխանությունների համար առաջնային են Երևանցիների և մայրաքաղաքի հյուրերի առօրյան ավելի հետաքրքիր և հագեցած դարձնելու ծրագրերը, մշակութային և ֆիզիկական դաստիարակության մանկապարտեզական կենտրոնների և տարբեր ծրագրերի իրականացման համար նպաստավոր պայմանների ստեղծումը: Այդ նպատակով 2016թ. ևս շարունակվել են սպորտային և մշակութային ենթակառուցվածքների արդիականացման, դրանց քանակի ավելացման աշխատանքները, ինչպես նաև՝ մարզամշակութային տարբեր միջոցառումների կազմակերպումը: Երևանի քաղաքապետարանը երաշխավորում է մայրաքաղաքի յուրաքանչյուր երեխայի արտադպրոցական կրթությունը՝ արվեստի, մշակույթի, երաժշտական դպրոցներում և մարզամշակութային կենտրոններում:

ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԵՎ ՍՊՈՐՏԱՅԻՆ ՕՋԱԽՆԵՐ

- ▶ Մայրաքաղաքի երեխաների արտադպրոցական ուսուցումը կազմակերպում են 26 երաժշտական, արվեստի և կերպարվեստի դպրոցներ, 16 մշակութային տներ, մշակույթի ստեղծագործության և գեղագիտական կենտրոններ, «Հայաստանի փոքրիկ երգիչներ» և ՅՈՒ. Բախշյանի անվ. մանկական ֆիլհարմոնիաները, «Երևան» փողային նվագախումբը, ինչպես նաև 12 շախմատի դպրոցներ և 28 մարզական այլ կազմակերպություններ:
- ▶ 2016 թվականին Երևանում արտադպրոցական կրթություն է ստացել 27 537 երեխա:
- ▶ 2016 թվականին մայրաքաղաքում հիմնվել է շախմատի 2 դպրոց՝ դպրոցների ընդհանուր թիվը Երևանում հասցնելով 12-ի, հիմնանորոգվել և վերանորոգվել է 15 մշակութային և մարզական ուսումնական հաստատություն:
- ▶ Երաժշտական դպրոցներին տրամադրվել է 18 տեսակի 154 երաժշտական գործիք:



ԳՐԱԴԱՐԱՆՆԵՐ

- ▶ Մայրաքաղաքի 19 գրադարանների գրքային ֆոնդը հարստացվել է շուրջ 15 000 գրքերով, իսկ ընթերցողների թիվը կազմել է 69 408 մարդ:
- ▶ 2016 թվականին շարունակվել են «Ավ. Իսահակյանի անվ. կենտրոնական գրադարանի» ընթերցողների էլեկտրոնային սպասարկման ծրագրի ներդրման աշխատանքները:
- ▶ Գրադարանները հասանելի են նաև առանձնահատուկ կարիքներ ունեցող քաղաքացիների համար. կիրառվում են «ԱՐԵՎ» և «Ոսկե շղթա 1,2,3» ծրագրերը՝ տեսողական և լսողական խնդիրներ ունեցողների համար:
- ▶ Կենտրոնական գրադարանում գործում է անվճար Wi-Fi կապ:



ԹԱՏՐՈՆՆԵՐ ԵՎ ԹԱՆԳԱՐԱՆՆԵՐ

- ▶ Երևանի քաղաքապետարանի ենթակայությամբ գործող Հր.Ղափլանյանի անվ. Դրամատիկական, Պատանի հանդիսատեսի և Մ.Մկրտչյանի անվ. արտիստական թատրոններում 2016 թվականին բեմադրվել է 278 ներկայացում, թատրոններն ունեցել են 53 158 հանդիսատես:
- ▶ Երևանի քաղաքապետարանի ենթակայությամբ գործող Երևան քաղաքի պատմության, Ժամանակակից արվեստի, Կ.Դեմիրճյանի, Ֆ.Նանսենի թանգարանները և «Էրեբունի» պատմահնագիտական արգելոց-թանգարանը կազմակերպել են 33 ցուցահանդես: Թանգարաններն ունեցել են շուրջ 47 000 այցելու:
- ▶ Թանգարանային ցուցանմուշները 2016 թվականին կազմում են ավելի քան 116 000 օրինակ:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԸ

- ▶ Մայրաքաղաքում 2016 թվականի ընթացքում կազմակերպվել է մարզամշակութային ավելի քան 86 միջոցառում, այդ թվում՝ փառատոններ, բացօթյա համերգներ, ցուցահանդեսներ, մրցույթներ, մարաթոններ: Համաքաղաքային միջոցառումների զգալի մասն ունի զբոսաշրջային նշանակություն:



ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ
ԹԱՆԳԱՐԱՆԸ 85 ՏԱՐԵԿԱՆ Է




ԿԱՐԵՆ ԴԵՄԻՐՃՅԱՆԻ ԹԱՆԳԱՐԱՆԸ
15 ՏԱՐԵԿԱՆ Է




ԱՐՏԱԴՊՐՈՑԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ ԿՐԹՈՒԹՅՈՒՆ ՍՏԱՑՈՂ ԵՐԵՄԱՆԵՐԻ ԹԻՎԸ


ԵՐԵՎԱՆԻ ՄԱՐԶԱԴՊՐՈՑՆԵՐՈՒՄ ՍՈՎՈՐՈՂ
ԵՐԵՄԱՆԵՐԻ ԹԻՎԸ՝




ՇԱԽՄԱՏԻ ԴՊՐՈՑՆԵՐՈՒՄ ՍՈՎՈՐՈՂ
ԵՐԵՄԱՆԵՐԻ ԹԻՎԸ՝



ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԿՐԹԱԿԱՆ
ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ
ՍՈՎՈՐՈՂ ԵՐԵՄԱՆԵՐԻ
ԹԻՎԸ՝



ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԵՎ ՍՊՈՐՏԱՅԻՆ ՕԶՄԱՆՆԵՐ 2013-16ԹԹ.



ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅՈՒՆ



Առողջապահության ոլորտում քաղաքային իշխանությունների հիմնական խնդիրը յուրաքանչյուր երևանցու համար որակյալ և մատչելի բժշկական օգնություն ստանալու պայմանների ապահովումն է: Այդ նպատակով 2016 թվականին շարունակվել են առողջապահական կազմակերպությունների բժշկական սարքավորումների համալրման, շենքային պայմանների բարելավման, ինչպես նաև բժշկական անձնակազմի մասնագիտական վերապատրաստման ծրագրերը: Մայրաքաղաքում ամբողջովին լուծվել է պոլիկլինիկաների ջեռուցման խնդիրը:

ՄԱՅՐԱՔԱՂԱՔՈՒՄ ԱՄԲՈՂՋՈՎԻՆ ԼՈՒԾՎԵԼ Է ՊՈԼԻԿԼԻՆԻԿԱՆԵՐԻ ԶԵՌՈՒՑՄԱՆ ԽՆԴԻՐԸ

ՀԱՄԱՅՆՔ-ՄԱՍՆԱԿՈՐ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ԵՐԵՎԱՆԻ ԵՆԹԱԿԱՅՈՒԹՅԱՆ Կ.ԵՍԱՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՊՈԼԻԿԼԻՆԻԿԱՆ ԱՄԲՈՂՋՈՒԹՅԱՄԲ ՀԻՄՆԱՆՈՐՈԳՎԵԼ ԵՎ ԱՐԴԻԱԿԱՆԱՑՎԵԼ Է

ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԲՅՈՒՋԵԻ ՄԻՋՈՑՆԵՐՈՎ ՀԻՄՆԱՆՈՐՈԳՎԵԼ ԵՎ ԿԵՐԱԶԻՆՎԵԼ Է «ՔԱՆԱՔԵՌ-ԶԵՅԹՈՒՆ» ԾՆՆԴԱՏՈՒՆԸ

2016 թվականին վերանորոգվել են 14 պոլիկլինիկաներ

Ձեռք է բերվել 55 միավոր ժամանակակից բժշկական սարքավորո՞ւմ, աՅԴ թՎՈՒՄ՝

- ▶ էլեկտրաստրագրոյթյան (ԷՍԳ) երկարատև մոնիտորինգի կրողի համակարգ
- ▶ ուլտրաձայնային դյուրակիր հետազոտման սարք,
- ▶ ուլտրաձայնային թերապիայի սարքավորում,
- ▶ բինոկուլյար մանրադիտակ,
- ▶ լաբորատոր ցենտրիֆուգ,
- ▶ լազերային թերապիայի սարքավորում,
- ▶ տրեդմիլ



ԱՄԲՈՒԼԱՏՈՐ - պոլիկլինիկական հաստատությունների վերազինումը նպաստել է ինչպես մատուցվող ծառայությունների որակի բարձրացմանը, այնպես էլ այդ հաստատություններ հաճախում-

ների ավելացմանը: 2016 թվականին Երևանի քաղաքապետարանի ենթակայության պոլիկլինիկաներում գրանցվել է շուրջ 1 800 000 հաճախում:

- ▶ Պետության կողմից երաշխավորված անվճար և արտոնյալ բժշկական օգնության սպասարկման ծրագրի շրջանակներում բուժման ուղեգիր է ստացել սոցիալապես անապահով և հատուկ խմբերում ընդգրկված 1 047 երևանցի, առողջարանային վերականգնողական բուժման ուղեգիր է տրամադրվել 366 քաղաքացու:
- ▶ Անվճար վիրահատվելու հնարավորություն է ստացել 6 382 քաղաքացի:
- ▶ 200 քաղաքացու տրվել է համակարգչային տոմոգրաֆիայի անվճար հետազոտության ուղեգիր:
- ▶ 2016 թվականին մայրաքաղաքում շտապ օգնության ծառայության կանչերի թիվը կազմել է շուրջ 243 000:
- ▶ Երևանի քաղաքապետարանի ենթակայության բժշկական հաստատությունների 65 բժիշկ և 55 բուժքույր անցել է մասնագիտական վերապատրաստման դասընթացներ:



ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏԸ 2013-2016ԹԹ.

100 %-ով

ԼՈՒԾԿԱԾ Է ՄԱՅՐԱՔԱՂԱՔԻ
ՊՈԼԻԿԼԻՆԻԿԱՆԵՐԻ ԶԵՌՈՒՑՄԱՆ ԽՆԴԻՐԸ

143

ԶԵՌՔ ԲԵՐԿԱԾ ԲԺՇԿԱԿԱՆ ՍԱՐՔԱԿՈՐՈՒՄ-
ՆԵՐԻ ՔԱՆԱԿԸ

6 476 824

ԱՄԲՈՒԼԱՏՈՐ ՊՈԼԻԿԼԻՆԻԿԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒ-
ԹՅՈՒՆՆԵՐ ՀԱՃԱՆՈՒՄՆԵՐԻ ԹԻՎԸ

925 977

ՇՏԱՊ ՕԳՆՈՒԹՅԱՆ ԿԱՆՉԵՐԻ
ԹԻՎԸ

68 682

ՔԱՂԱՔԱՑԻ ԱՌՈՂՋԱՊԱՀԱԿԱՆ ՏԱՐԲԵՐ
ԱԿՑԻԱՆԵՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ԱՆՎՃԱՐ
ԲԺՇԿԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆ Է ԱՆՑԵԼ

ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱՊԱՀՆՈՎՈՒԹՅՈՒՆ



Սոցիալական ապահովության ոլորտում 2016թ. Երևանի քաղաքապետարանի ռազմավարությունն ուղղվել է մայրաքաղաքի բնակիչների սոցիալական երաշխիքների պաշտպանությանն ու իրականացմանը: Քաղաքապետ Տարոն Մարգարյանի հանձնարարականով շարունակվել են քաղաքացիների հասցեական սոցիալական աջակցության ծրագրերը՝ հոգածության և ուշադրության կենտրոնում պահելով կարիքավոր ընտանիքներին և խոցելի սոցիալական խմբերին:

2016 ԹՎԱԿԱՆԻՆ ԻՐԱԿԱՆԱՑՎԱԾ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ԱՌԱՋՆԱՅԻՆ ՈՒՂՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ ԵՆ

- ▶ բնակչության սոցիալապես անապահով խմբերին օժանդակությունը,
- ▶ կարիքավոր և բազմազավակ ընտանիքների երեխաներին աջակցությունը,
- ▶ կարիքավոր սիրիահայերին օժանդակությունը,
- ▶ հաշմանդամների սոցիալական աջակցությունն ու հասարակական ինտեգրումը,
- ▶ զինձառայողների և ազատամարտիկների ընտանիքներին աջակցությունը,
- ▶ տարեցներին և վետերաններին սոցիալական աջակցությունը,
- ▶ անօթևան անձանց ժամանակավոր կացարաններով ապահովումն ու ինքնուրույն կյանքին վերադառնալու օգնությունը:

ԵՐԵՒԱՆԵՐԻ ՀԱՄԱՐ

- ▶ Գիտելիքի օրվան ընդառաջ Երևանի քաղաքապետարանի ենթակայության մանկապարտեզների ավարտական խմբերի շուրջ 10 000, ինչպես նաև սոցիալապես առավել կարիքավոր ընտանիքների 1-4-րդ դասարաններ հաճախող 5 697 երեխաների տրամադրվել են պայուսակներ և գրենական պիտույքներ:
- ▶ Կազմակերպվել է սոցիալապես անապահով ընտանիքների 7-13 տարեկան 1 170 երեխաների ամառային հանգիստը մանկական առողջարարական ճամբարներում:



ԸՆՏԱՆԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ

- ▶ Տարվա ընթացքում կարիքավոր 10 635 ընտանիք ստացել է պարենային աջակցություն
- ▶ Ամանորյա միջոցառումների շրջանակներում 21 874 ընտանիքի տրամադրվել է սննդամթերքի փաթեթներ, իսկ սոցիալապես անապահով ընտանիքների 38 513 փոքրիկներ ստացել են քաղցրավենիքի նվերփաթեթներ
- ▶ 4 000 երեխա մասնակցել է Ամանորի և Սուրբ Ծննդյան տոների առիթով կազմակերպված միջոցառումներին:



ՍԻՐԻԱՀԱՅԵՐԻ ՀԱՄԱՐ

- ▶ Սիրիահայ ավելի քանի 1 200 ընտանիքի տրամադրվել է դրամական, նյութական և պարենային աջակցություն

ՀԱՏՈՒԿ ԾՐԱԳՐԵՐ

- ▶ Մայրաքաղաքում իրականացվող սոցիալական բոլոր ծրագրերում առաջնահերթության կարգով ներառվում են կյանքի առանձնահատուկ պայմաններ ունեցող քաղաքացիները, նրանք նաև ակտիվորեն ընդգրկվում են քաղաքային կառավարման և մարզամշակութային կյանքի կազմակերպման ծրագրերում:
- ▶ «Երևանի քաղաքապետարանը Երևանի մանուկներին» ծրագրի շրջանակներում աջակցություն է ցուցաբերվել միայնակ մայրերի՝ երևանաբնակ ուղեղային կաթված ունեցող փոքրիկների թերապևտիկ բուժումներ կազմակերպելու համար:

ԲՆԱԿԱՐԱՆՆԵՐ՝ ԶԻՆԾԱՌԱՅՈՂՆԵՐԻ ԸՆՏԱՆԻՔՆԵՐԻՆ


- ▶ Նոր բնակարաններ են տրամադրվել զոհված և հաշմանդամ զինծառայողների և ազատամարտիկների 7 ընտանիքների, որոնցից 4-ը՝ ապրիլի սկզբին առաջնագծում զոհված զինծառայողների և կամավորների ընտանիքներ:
- ▶ Երևանի քաղաքապետի նախաձեռնությամբ երևանաբնակ զինծառայողների 1 200 ծնող հնարավորություն է ստացել տեսակցել ՀՀ սահմանամերձ և Արցախի զորամասերում ծառայող իրենց զավակներին:



ՀԱՏՈՒԿ ՀՈԳԱԾՈՒԹՅԱՆ ԽՄԲԵՐ

- ▶ «Էրեբունի-Երևան 2798» տոնակատարությունների շրջանակներում սոցիալապես անապահով 2798 ընտանիք որպես աջակցություն ստացել է կենցաղային տեխնիկա: Ծրագրում ընդգրկվել են բնակչության սոցիալական տարբեր խմբեր:
- ▶ Հասարակական կառույցների հետ համագործակցությամբ մայրաքաղաքում շարունակել են գործունեությունը 19 բարեգործական ճաշարանները, տարեցների ցերեկային խնամքի կենտրոնները, որոնցից օգտվել է 2 400 մարդ:
- ▶ Մայրաքաղաքում բնակվող վետերանները, Եղեռնը վերապրած և այլ խմբերի տարեցներ մշտապես եղել են քաղաքային իշխանությունների ուշադրության կենտրոնում: Նրանց համար կազմակերպվել են միջոցառումներ, այցելություններ, տրամադրվել է անհրաժեշտ օգնություն:
- ▶ Երևանի քաղաքապետարանի ուշադրության կենտրոնում է եղել 140 անօթևան: Նրանց աջակցություն է ցուցաբերվել ժամանակավոր կացարաններում տեղավորման, ընտանիքի հետ կապերի և փաստաթղթերի վերականգնման, աշխատանքի տեղավորման հարցերում:

ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԸ 2013-2016 ԹԹ.



ԶԲՈՍԱՇՐՋՈՒԹՅՈՒՆ



Երևանը շարունակում է մնալ Հայաստանի գլխավոր զբոսաշրջային կենտրոնը, և քաղաքային իշխանությունների ջանքերը մշտապես ուղղված են պահպանելու մայրաքաղաքի զբոսաշրջային կենտրոնի դերն ու նշանակությունը ազգային և միջազգային մակարդակներում: 2016 թվականին իրականացված ծրագրերը նպաստել են մայրաքաղաքում իրադարձային զբոսաշրջության զարգացմանը, Երևան ժամանող զբոսաշրջիկների տեղեկատվական աջակցության ապահովմանը, զբոսաշրջային ինդուստրիայի ենթակառուցվածքների հետ համագործակցության զարգացմանը: Երևանի քաղաքապետարանը մշակել է առաջարկներ՝ զբոսաշրջային ենթակառուցվածքների արդիականացման գործում ներդրողներ ներգրավելու նպատակով:

ԶԲՈՍԱՇՐՋՈՒԹՅՈՒՆԸ ԹՎԵՐՈՎ

2016 թվականի հունվար-սեպտեմբեր ամիսներին Հայաստանի Հանրապետություն է ժամանել 969 010 զբոսաշրջիկ, որոնք առնվազն մեկ օր անցկացրել են Երևանում

ԵՐԵՎԱՆՈՒՄ ԶԲՈՍԱՇՐՋԻԿՆԵՐԻ ՀՈՍՔԸ ՏԱՐԿԱ ԸՆԹԱՑՔՈՒՄ ԱԿՏԻՎԱՅԵԼ Է

- ▶ Նորին Սրբություն Հռոմի Պապ Ֆրանցիսկոսի այցի օրերին
- ▶ Մայրաքաղաքի օրվան նվիրված տոնակատարությունների և այլ միջոցառումների օրերին:

2015 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՒՅՆ ԺԱՄԱՆԱԿԱՀԱՏՎԱԾԻ ՀԱՄԵՄԱՏ ԶԲՈՍԱՇՐՋԻԿՆԵՐԻ ԱՅՅԵԼՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԹԻՎԸ ԵՐԵՎԱՆ ԱՃԵԼ Է 3.6 %-ՈՎ

- ▶ տպագրվել և հյուրանոցներին, զբոսաշրջային ընկերություններին, թանգարաններին են տրամադրվել երկլեզու (ռուսերեն-անգլերեն լեզուներով) զբոսաշրջային քարտեզներ
- ▶ ամենօրյա առցանց տեղեկատվություն է տրամադրվել տուրիզմի բաժին դիմող զբոսաշրջիկներին
- ▶ Երևանի քաղաքապետարանի պաշտոնական կայքում ստեղծվել է «Միջոցառումների օրացույց» բաժինը, որի միջոցով ներկայացվում են մայրաքաղաքում կազմակերպվող մարզական, մշակութային և զբոսաշրջային-իրադարձային միջոցառումները
- ▶ ՀԲԸՄ հետ համատեղ մշակվել է «Բացահայտենք Երևանը. հայացք քաղաքի անցյալին և ներկային» զբոսաշրջային էլեկտրոնային գիրքը



Իրադարձային զբոսաշրջության զարգացման նպատակով տարվա ընթացքում անցկացվել են ավանդական դարձած Զագի օր, «Համով-հոտով Երևան», «Երևան ՏԱՐԱԶՖեստ», «Ձմերուկի» և «Երևանի գարեջրի» փառատոնները:



Միջազգային և միջտարածաշրջանային համագործակցության զարգացման նպատակով այս տարի Երեվանը ներկայացվել է 18-րդ Կովկասյան զբոսաշրջային ցուցահանդեսին Թբիլիսիում և Չինաստանում կայացած Քաղաքապետների 5-րդ միջազգային զբոսաշրջային ֆորումին:

Քույր և գործընկեր քաղաքների համագործակցության շրջանակներում համաձայնագրեր են կնքվել Երևան և Սանկտ Պետերբուրգ, Երևան և Կազան քաղաքների միջև՝ զբոսաշրջության զար-


գացման համատեքստում: Փորձի փոխանակման նպատակով համագործակցության ծրագրեր են իրականացվել ֆրանսիական Լիոն, Իլ դե Ֆրանս, Փարիզ քաղաքների հետ:



ԵՐԵՎԱՆՈՒՄ ԶՐՈՍԱՇՐՋԱՅԻՆ ԵՆԹԱԿԱՌՈՒՅՎԱԾՔՆԵՐԻ ԶԱՐԳԱՅՄԱՆ ԾՐԱԳՐԵՐ

- ▶ «Երևան Սիթի Տուր» զբոսաշրջային առաջարկից 2016 թվականին օգտվել է շուրջ 4000 այցելու: «Երեվան Սիթի Տուր» շրջայց է կազմակերպվել ԼՂՀ-ում զոհված զինծառայողների ընտանիքների երեխաների, մարզերի երեխաների և տարեցների համար:
- ▶ Շարունակվում է Երևանի կենդանաբանական այգու արդիականացման ծրագիրը, որի նպատակներից մեկը այգին տարածաշրջանում գրավիչ ու հետաքրքիր զբոսաշրջային վայր դարձնելն է:
- ▶ Զբոսաշրջային ենթակառուցվածքների արդիականացման ծրագրերում մասնավոր ներդրողների գրավելու նպատակով մշակվել են ներդրումային փաթեթ-առաջարկներ: Այդ փաթեթները ներառում են «Էրեբունի» պատմահնագիտական արգելոց-թանգարանի, Շենգավիթ հնավայրի, Կարմիր բլուր հնավայրի վերականգնման և զբոսաշրջային ենթակառուցվածքների ստեղծման, «Հաղթանակ» զբոսայգու, Հրազդանի կիրճի տարածքների վերակառուցման ու արդիականացման և այլ ծրագրեր:
- ▶ Ավարտվել է «Վերնիսաժի» վերակառուցման և արդիականացման ծրագիրը: Տարածքի կանաչ մակերեսը կազմում է 6 000 քմ, անցկացվել է ոռոգման նոր ցանց, Հանրապետության և Խանջյան փողոցների կողմից կառուցվել են շատրվաններով հրապարակներ, իսկ միջնամասում՝ 7 ցայտաղբյուրներով հրապարակ: Այգու կահավորանքն ամբողջությամբ փոխարինվել է նորով՝ տաղավարներ, նստարաններ, աղբամաններ: Նորացվել է լուսավորության ցանցը:





* Տեղեկանք՝ ըստ Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի տուրիզմի բաժնի կողմից անցկացված հյուրանոցային տնտեսության օբյեկտների գույքագրման տվյալների



ԱՐՏԱՔԻՆ ԿԱՊԵՐ



Երևան քաղաքի արտաքին կապերի ոլորտում իրականացվող աշխատանքների գլխավոր նպատակը ՀՀ մայրաքաղաք Երևանի ճանաչելիության բարձրացումն է, դիրքավորումն ու հեղինակության կառավարումը տարբեր երկրների և դրանց բնակչության շրջանում: Այդ համատեքստում տարբեր քաղաքների և շրջանների, ինչպես նաև միջազգային կառույցների և կազմակերպությունների հետ կապերի ստեղծումն ու զարգացման աշխատանքները ակտիվորեն շարունակվել են նաև 2016թ.:

ԵՐԵՎԱՆԻ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ԱՅՆ ՔԱՂԱՔՆԵՐԻ ԵՎ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԵՏ



ՌԻԳԱՅՈՒՄ ԲԱՅՎԵԼ Է «ԵՐԵՎԱՆ» ԶԲՈՍԱՅԳԻ



ՏԱՐՈՆ ՄԱՐԳԱՐՅԱՆԻ ԱՅՑԸ ՍՏԵՓԱՆԱԿԵՐՏ

ՀԱՍՏԱՏՎՈՒՄ ԵՎ ԸՆԴՀԱՅՆՎՈՒՄ ԵՆ ՄԱՅՐԱՔԱՂԱՔԻ ԳՈՐԾԸՆԿԵՐԱՅԻՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

- ▶ 2016 թվականի դրությամբ Երևանի քաղաքապետարանը համագործակցում է ավելի քան 5 տասնյակ քաղաքների և շրջանների հետ:
- ▶ Ընդլայնվել են գործընկերային կապերը միջազգային և տարածաշրջանային կառույցների հետ:
- ▶ Ավելի քան 30 գործընկեր քաղաքների պատվիրակություններ համագործակցության շրջանակներում այցելել են Երևան:



- ▶ Քաղաքապետ Տարոն Մարգարյանի հրավերով Երևան է ժամանել Փարիզի քաղաքապետ Անն Իդալգոն:
- ▶ Երևանում անցկացվել են Մոսկվայի և Սանկտ Պետերբուրգի օրեր:
- ▶ «Էրեբունի-Երևան» տոնակատարության շրջանակներում մայրաքաղաք են ժամանել շուրջ 20 գործընկեր քաղաքների պատվիրակություններ:
- ▶ Երևանում առաջին անգամ կազմակերպվել է արտաքին գովազդի միջազգային «YOF16» փառատոնը, որը համախմբել է տարբեր քաղաքների ոլորտի պատասխանատուներին, գովազդի ոլորտում հայաստանյան և միջազգային փորձագետների, խոշոր կազմակերպությունների արտ-տնօրենների: Փառատոնի շրջանակներում կազմակերպվել են համաժողով, կլոր սեղաններ, վարպետության դասեր:
- ▶ Միջազգային «Ֆիչ Ռեյթինգս» (Fitch Ratings) գործակալության հանրային ֆինանսների բնագավառում Երևանին շնորհել է B+ (կայուն վարկանիշ): Նման վարկանիշի առկայությունը միջազգային խոշոր ներդրողների կողմից Երևանում ուղղակի ներդրումներ կատարելու վերաբերյալ որոշումներ ընդունելիս կարող է կարևորագույն խթանիչ գործոն հանդիսանալ:

Ակտիվացվել է Երևանի համագործակցությունը ԼՂՀ քաղաքների, շրջանների և ՀՀ մարզերի և համայնքների հետ

- ▶ Երևանը շարունակել է տարբեր ոլորտներում համագործակցության ծրագրերը ԼՂՀ շրջանների և քաղաքների հետ:
- ▶ Երևանի քաղաքապետարանի աջակցությամբ Ստեփանակերտում կառուցվում է «Ազատամարտիկների» պուրակը:



ԵՐԵՎԱՆԻ ԱՎԱԳԱՆԻ

Երևանի ավագանին 2016 թվականին շարունակել է իր բնականոն գործունեությունը՝ ապահովելով իր լիազորությունների շրջանակներում բոլոր հիմնախնդիրների համակողմանի քննարկումը և որոշումների ընդունումը:



2016 ԹՎԱԿԱՆԻՆ ԱՎԱԳԱՆԻՆ.

- ▶ գումարել է 14 նիստ՝ 9 հերթական և 5 արտահերթ,
- ▶ հրավիրել է 4 մշտական հանձնաժողովների 45 նիստ,
- ▶ ընդունել է 203 որոշում, որոնցից 6-ը անցել է հանրային քննարկման և հանրային բաց լսումների փուլ,
- ▶ Երևանի պատվավոր քաղաքացու կոչում է շնորհել 4 հոգու:

2016 ԹՎԱԿԱՆԻՆ ԴԱՐՁԱՆ ԵՐԵՎԱՆԻ ՊԱՏՎԱԿՈՐ ՔԱՂԱՔԱՅԻՆԵՐ



ԱՐԹՈՒՐ ԱԼԵՔՍԱՆՅԱՆ



ՄԻՀՐԱՆ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ



ՈԱՖԱՅԵԼ ՔՈԹԱՆՋՅԱՆ



ՍԱՌԱ ԵՍԱՅԱՆ



ԵՐԵՎԱՆԸ

ԱՇԽԱՐՀԻ ՏԱՐԲԵՐ ՎԱՐԿԱՆԻՇԱՅԻՆ ԱՂՅՈՒՍԱԿՆԵՐՈՒՄ

Ժամանակակից քաղաքների կայուն զարգացումն իր արտացոլումն է գտնում միջազգային հեղինակավոր վարկանիշային աղյուսակներում ու անվանակարգերում: Վերջին տարիներին Երևանում գրանցվող զարգացումները բացառիկ են այն առումով, որ Հայաստանի մայրաքաղաքը միաժամանակ մի քանի հեղինակավոր վարկանիշային աղյուսակներում հայտնվեց՝ գերազանցելով տարածաշրջանային և եվրոպական զարգացած մի շարք քաղաքների, ինչպես նաև գրավելով միջազգային հանրության, զբոսաշրջիկների և ներդրողների ուշադրությունը:

Երևանը՝ կայուն զարգացող քաղաք

Ըստ «Ֆիչ Ռեյթինգս»-ի գնահատման

2016թ. միջազգային «Ֆիչ Ռեյթինգս» (Fitch Ratings) հեղինակավոր գործակալությունը Երևան քաղաքն առաջին անգամ դասակարգեց քաղաքների վարկանիշային աղյուսակում, այն Է՝ B+ (կայուն վարկանիշ) անվանակարգում: Նման վարկանիշի առկայությունը կողմնորոշիչ կարևոր գործոն կարող է լինել միջազգային խոշոր ներդրողների համար Երևան քաղաքում ուղղակի ներդրումներ կատարելու որոշման հարցում:

FitchRatings

Երևանը հարմարավետ քաղաք՝ կյանքի որակի տեսանկյունից

Ըստ «Մըրսեր»-ի գնահատման

2016թ. «Մըրսեր» (Mercer) միջազգային խորհրդատվական ընկերությունը Երևանն ընդգրկեց աշխարհի այն քաղաքների ցուցակում, որոնք առավել հարմարավետ են ապրելու տեսանկյունից: Ընտրության չափանիշներն են եղել՝ կրթության հնարավորությունները, հանցավորության մակարդակը, հանգստի կազմակերպումը, քաղաքական կայունությունը, տրանսպորտը, բնապահպանությունը և այլն: Հայաստանի մայրաքաղաքը «Quality of living» վարկանիշում է, որում ընդգրկված են աշխարհի 230 քաղաքներ: ԱՊՀ քաղաքներից ցանկում են նաև Վիլնյուսը (Լիտվա), Տալինը (Էստոնիա), Ռիգան (Լատվիա), Մոսկվան և Սանկտ Պետերբուրգը (ՌԴ):

MERCER

Երևանը արագ զարգացող քաղաք՝ Էլեկտրոնային կառավարման տեսանկյունից

Ըստ «Ռաթգրս»-ի գնահատման

2003թ. ի վեր ԱՄՆ-ի հեղինակավոր «Ռաթգրս» (Rutgers) համալսարանը հրապարակում է աշխարհի քաղաքների գնահատման ցանկը՝ Էլեկտրոնային կառավարման տեսանկյունից: 2014թ. ի վեր Երևանը վարկանիշային աղյուսակում առաջատար դիրքերում է, ընդ որում, Էլեկտրոնային կառավարման ընդհանուր ցուցանիշով Երևանը լավագույն քաղաքների հնգյակում է, իսկ Էլեկտրոնային կառավարման մատչելիության կամ օգտագործման հարմարավետության չափորոշիչով աշխարհի 100 խոշոր քաղաքների շրջանում՝ 1-ին հորիզոնականում: Ցուցակում ընդգրկված են նաև Սեուլը (Կորեա), Նյու Յորքը (ԱՄՆ), Հոնկոնգը (Չինաստան), Սինգապուրը (Սինգապուր):

Երևանը մատչելի քաղաք՝ ապրելու և աշխատելու համար

Ըստ «Ֆասթքոմպանի»-ի գնահատման

2016թ. գործարար աշխարհում հայտնի «Ֆասթքոմպանի» (Fastcompany.com) հեղինակավոր պարբերականը հրապարակեց ապրելու և աշխատելու համար աշխարհի 10 ամենամատչելի քաղաքների ցանկը, որը ներառում է նաև Երևանը: «Քաղաքում արձանագրված տնտեսական վերելքը Երևանի սրճարանները լցրել է օտարերկրյա աշխատակիցներով», - գրում է պարբերականը: 10-յակում են ընդգրկվել նաև Բանգկոկը (Թաիլանդ), Բալին (Ինդոնեզիա), Բեյլրադը (Սերբիա) և այլ քաղաքներ:

FASTCOMPANY

Երևանը՝ Եվրոպայի հնագույն քաղաք

Ըստ «Դիմելեգրաֆ»-ի գնահատման

2016թ. Բրիտանական հեղինակավոր «Դիմելեգրաֆ» պարբերականը (The Telegraph) հրապարակել է Եվրոպայի 16 հնագույն քաղաքների ցանկը, որոնք արժե կյանքում գոնե մեկ անգամ այցելել: «Հռոմի հիմնադրումից 30 տարի առաջ Հայաստանի ներկայիս մայրաքաղաքն Ասիայից դեպի Եվրոպա ընկած ճանապարհին կարևոր առևտրային կանգառ է եղել: Այն ենթարկվել է հռոմեացիների, բյուզանդացիների, պարսիկների, արաբների, սելջուկների, մոնղոլների ու թուրքերի, իսկ ավելի ուշ՝ 1920 թ., խորհրդային Կարմիր բանակի ներխուժումներին», - գրել է պարբերականը Երևանի մասին՝ աղյուսակում առաջարկների հատվածում ավելացնելով Հայաստանի մայրաքաղաքը: Եվրոպայի հնագույն քաղաքների ցանկում են հայտնվել նաև Չադարը (Խորվաթիա), Լիսաբոնը (Պորտուգալիա), Աթենքը (Հունաստան), Հռոմը (Իտալիա) և այլն:

The Telegraph

**Հարգելի համաքաղաքացիներ,
ձեզ հուզող բոլոր հարցերով կարող եք դիմել Երևանի
քաղաքապետարանի և վարչական շրջաններում գործող «Թեժ գիծ»
ծառայությանը կամ նամակ գրել էլեկտրոնային հասցեներով**

**Երևանի քաղաքապետարանի թեժ գիծ՝
+(374 11) 514 000
Էլ. փոստ՝ pressyerevan@yerevan.am**

➤ Աջափնյակ վարչական շրջան

**+(374 11) 518-008
ajapnyak@yerevan.am**

➤ Ավան վարչական շրջան

**+(374 11) 518-111
avan@yerevan.am**

➤ Արաբկիր վարչական շրջան

**+(374 11) 518-188
arabkir@yerevan.am**

➤ Դավթաշեն վարչական շրջան

**+(374 11) 518-288
davtashen@yerevan.am**

➤ Էրեբունի վարչական շրջան

**+(374 11) 518-388
erebouni@yerevan.am**

➤ Կենտրոն վարչական շրջան

**+(374 11) 518-488
kentron@yerevan.am**

➤ Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջան

**+(374 11) 518-588
malatia_sebastia@yerevan.am**

➤ Նոր Նորք վարչական շրջան

**+(374 11) 518-688
nor_norq@yerevan.am**

➤ Նորք-Մարաշ վարչական շրջան

**+(374 11) 518-718
norq_marash@yerevan.am**

➤ Նուբարաշեն վարչական շրջան

**+(374 11) 518-738
nubarashen@yerevan.am**

➤ Շենգավիթ վարչական շրջան

**+(374 11) 518-808
shengavit@yerevan.am**

➤ Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջան

**+(374 11) 518-889
qanaqer_zeztun@yerevan.am**

2016

ԵՐԵՎԱՆԻ

ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆ
ՏԱՐԵԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ



ՀՀ, Երևան, 0015, Արգիշտի փող. 1
Հեռ.՝ (+374 11) 514121
Էլ. փոստ՝ press@yerevan.am

 [evnmunicipality](https://twitter.com/evnmunicipality)
 [yerevanmunicipality](https://www.facebook.com/yerevanmunicipality)
 www.yerevan.am